

ՀՀ ԿԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ



*ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից
տրամադրվող վարկերի կառուցվածքը*



Ներածություն


Սույն աշխատանքի նպատակն է վերլուծել ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի կառուցվածքը և համեմատել տարբեր ոլորտներին տրամադրված վարկերի ծավալները :

Ֆինանսական տեղեկատվությունը ձեռք է բերվել Կենտրոնական բանկի վիճակագրական տվյալներ բաժնից: Վերլուծության մեջ ներառված է ՀՀ-ում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների վարկային պորտֆելները:

ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի կառուցվածքը

ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերը 2015թ.-ի մարտի վերջի դրությամբ կազմել են 1,938 մլրդ ՀՀ դրամ՝ 2014թ.-ի մարտի նկատմամբ աճելով 12.9%-ով, իսկ 2014թ.-ի դեկտեմբերի նկատմամբ նվազելով՝ 3.6%-ով: Տրամադրված վարկերի կառուցվածքում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեն սպառողական վարկերը, արդյունաբերության և առևտրի ոլորտներին տրամադրված վարկերը: (Գծապատկեր 1)

Գծապատկեր 1. ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի ծավալները



Աղյուսակ 1. ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի կառուցվածքը

Մլրդ ՀՀ դրամ

	Մարտ, 2014	Դեկտեմբեր, 2014	Մարտ, 2015
Արդյունաբերություն	359.1	429.1	400
Գյուղատնտեսություն	108.6	127.6	138.4
Շինարարություն	113.3	124.2	114.7
Տրանսպորտ և կապ	41.8	44.3	45.4
Առևտուր	344.6	386.3	363.3
Սպասարկման ոլորտ	100	133.7	136.9
Սպառողական վարկեր	390.7	451.5	436.4
Հիպոթեքային վարկեր	145.1	172.4	169.4
Այլ	113.1	141.1	133.1
Ընդամենը	1,716.3	2,010.2	1,937.6

Արդյունաբերություն: 2015թ.-ի մարտի վերջի դրությամբ արդյունաբերության ոլորտին տրամադրվել է 400 մլրդ ՀՀ դրամ վարկ, որը կազմել է ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի 20.6%-ը: Նախորդ տարվա մարտի դրությամբ արդյունաբերության ոլորտին տրամադրված վարկերը աճել են 11.4%-ով, իսկ 2014թ.-ի դեկտեմբերի նկատմամբ՝ նվազել 6.8%-ով:

Գյուղատնտեսություն: 2015թ.-ի մարտի 31-ի դրությամբ գյուղատնտեսության ոլորտին տրամադրված վարկերի ծավալը կազմել է 138.4 մլրդ ՀՀ դրամ, որի մասնաբաժինը ընդհանուր վարկային պորտֆելի մեջ եղել է 7.1%: 2014թ.-ի մարտի նկատմամբ գյուղատնտեսական վարկերը ունեցել են 27.4%, իսկ 2014թ.-ի դեկտեմբերի դրությամբ՝ 8.5% աճ:

Շինարարություն: 2015թ.-ի մարտի վերջի դրությամբ արդյունաբերության ոլորտին տրամադրվել է 114.7 մլրդ ՀՀ դրամ վարկ, որը կազմել է ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի 5.9%-ը: Նախորդ տարվա մարտի համեմատ շինարարության ոլորտին տրամադրված վարկերի ծավալը աճել է 1.25%-ով, իսկ 2014թ.-ի դեկտեմբերի նկատմամբ նվազել՝ 7.7%-ով:

Տրանսպորտ և կապ: 2015թ.-ի մարտ ամսվա դրությամբ տրանսպորտի և կապի ոլորտին տրամադրված վարկերի ծավալը կազմել է 45.4 մլրդ ՀՀ դրամ, որը կազմել է ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի 2.3%-ը: 2014թ.-ի մարտի նկատմամբ տրանսպորտի և կապի ոլորտին տրամադրված վարկերը ունեցել են 8.7% , իսկ 2014թ.-ի դեկտեմբերի դրությամբ՝ 2.5% աճ:

Առևտուր: 2015թ.-ի մարտի վերջի դրությամբ առևտրի ոլորտին տրամադրվել է 363.3 մլրդ ՀՀ դրամ վարկ, որը կազմել է ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի 18.8%-ը: 2014թ.-ի մարտի նկատմամբ 2015թ.-ի մարտին առևտրային վարկերի ծավալը աճել է 5.5%-ով, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ նվազել՝ 5.9%-ով:


Սպասարկում: 2015թ.-ի մարտ ամսվա դրությամբ սպասարկման ոլորտին տրամադրված վարկերը կազմել են 136.9 մլրդ ՀՀ դրամ, որը կազմել է ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի 7.1%-ը: 2014թ.-ի մարտ ամսվա նկատմամբ սպասարկման ոլորտին տրամադրված վարկերի ծավալը աճել է 2.4%-ով, իսկ 2014թ.-ի դեկտեմբերի նկատմամբ աճել՝ 2.4%-ով:

Սպառողական վարկեր: 2015թ.-ի մարտ ամսվա դրությամբ սպառողական վարկերը կազմել են 436.4 մլրդ ՀՀ դրամ, որը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 22.5%-ը: 2015թ.-ի մարտին նախորդ տարվա միննույն ժամանակահատվածի նկատմամբ սպառողական վարկերի ծավալը աճել է 11.7%-ով, մինչդեռ 2014թ.-ի վերջի դրությամբ նվազել՝ 3.3%-ով:


Հիպոթեքային վարկեր: 2015թ.-ի մարտի վերջի դրությամբ հիպոթեքային վարկերը կազմել են 169.4 մլրդ ՀՀ դրամ, որը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 8.7%-ը: 2014թ.-ի վերջի նկատմամբ 2015թ.-ի մարտին հիպոթեքային վարկերը նվազել են 1.7%-ով, իսկ 2014թ.-ի մարտի նկատմամբ աճել՝ 16.7%-ով:

Այլ վարկեր: 2015թ.-ի մարտի վերջի դրությամբ այլ վարկերը կազմել են 133.1 մլրդ ՀՀ դրամ, որը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 6.9%-ը: Նախորդ տարվա միևնույն ժամանակահատվածի համեմատ այլ վարկերի մասնաբաժինը բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի կառուցվածքում աճել է 17.6%-ով, իսկ 2014թ.-ի դեկտեմբերի վերջի համեմատ նվազել՝ 5.7%-ով: (Գծապատկեր 2, 3)

Գծապատկեր 2. ՀՀ բանկերի և ՎԿ-ների կողմից տրամադրված վարկերն ըստ ոլորտների 2015թ.-ի մարտ ամսվա դրությամբ



Գծապատկեր 3. ՀՀ բանկերի և ՎԿ-ների կողմից տրամադրված վարկերն ըստ ոլորտների 2014թ.-ի մարտ ամսվա դրությամբ



Ամփոփում

Այսպիսով, ելնելով վերը նշվածից կարելի նկատել, որ 2014թ.-ի մարտի համեմատ 2015թ.-ի մարտին ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերը աճել են գրեթե 13%-ով ի հաշիվ բոլոր ոլորտների վարկավորման ծավալների աճի, մինչդեռ 2014թ.-ի դեկտեմբերի համեմատ առկա է նվազման միտում (3.6%-ով): Մասնավորապես, 2014թ.-ի դեկտեմբերից մինչև 2015թ.-ի մարտ ընկած ժամանակահատվածում առավել շատ կրճատվել է շինարարության, արդյունաբերության, առևտրի և այլ ոլորտներին տրամադրված վարկերի ծավալները, ինչը հետևանք է այն բանի, որ այդ ժամանակահատվածում վարկային մարումները գերազանցել են տրամադրվող վարկերին: